«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Ադամյան Դիանա

Ուսումնական հաստատություն՝ Երևանի համար 175 միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1-ԻՆ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

ԳԼՈՒԽ 2-ՐԴ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրաճանաչությունը լինելով ուսուցման հիմնաքարերից, չափազանց կարևորվում է նախ այն առումով, որ այն հանդես է գալիս իբրև հիմնակետ հետագա ուսուցման համար:

Աշխատանքի արդիականությունը-ընտրված թեմայի արդիականություունը պայմանավորված է վաղ ուսուցման ծրագրային նոր պահանջներով: Թեմայով ի ցույց ենք դնում գրաճանաչության կարևորությունը հայ դպրոցում:

Աշխատանքի նպատակը- ուսումնասիրել հայոց լեզվի գրաճանաչության պատմության մեջ գոյություն ունեցող փորձն ու զարգացման ընթացքը, գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները:

Աշխատանքի խնդիրները-Աշխատանքի նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները

- ✓ ուսումնասիրել գրաճանաչության կազմակերպման գործընթացի առանձնահատկությունները դպրոցում.
- ✓ ուսումնասիրել գրաճանաչություան փուլերը և մեթոդները
- ✓ ուսումնասիրել դրանց կիրառությունը ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում:

Աշխատանքի կիրառական նշանակությունը- Սույն աշխատանքի կիրառման նշանակությունը հանդիսանում է այն, որ գրաճանաչությունը հանդիսանում է ուսուցման հիմնաքարը և այն մշտապես կիրառելի է ուսուցման գործընթացում, գրաճանաչության մեթոդների կիրառման արդյունքում տարրական դասարանի սովորողները կարողանում են սովորել գրել և կարդալ:

ԳԼՈՒԽ 1-ԻՆ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրաճանաչությունը լինելով ուսուցման հիմնաքարերից, չափազանց կարևորվում է նախ այն առումով, որ այն հանդես է գալիս իբրև հիմնակետ հետագա ուսուցման համար: Գրաճանաչության մեթոդը կարդալ և գրել սովորեցնելու միջոց է, որի հիմքում դրված է լեզվի հնչյութների փոխհարաբերությունը և ուսուցվող լեզվական միավորը: Հայ ժողովուրդն իր պատմության բոլոր քառուղիներում կարևորել է մանուկների գրաճանաչ դարձնելու խնդիրը: Ինչպիսի օրհասական պայմաններում էլ որ եղել է հայ մարդը, որքան էլ որ դժվար է եղել նրա հանապազօրյա վաստակը, նա իր կյանքի նպատակն է համարել սերնդի կրթությունը:

Երկարամյա հետազոտությունների արդյունքում Ղ. Աղայանից մինչև Տեր-Գրիգորյան հղկվել է գրաճանաչության մեթոդիկան, որի միջոցով վերլուծական-համադրական աշխատանքի հիման վրա ձևավորվում են սովորողների գրելու և կարդալու տարրական կարողությունները, ինչպես նաև ապահովվվում է նրանց խոսքի արդյունավետ զարգացումը: Գրաճանաչության մեթոդիկայի պատմական զարգացման գործընթացում մեկը մյուսին փոխարինել են տարբեր մանկավարժահոգեբանական հիմնավորումներ ունեցող մեթոդներ, հիմնարար տեսություններ, որոնք անցնում են այբբենարանից այբբենարան, մեթոդիկայից մեթոդիկա: Գրաճանաչության մեթոդները բաժանվում են չորս խմբի՝ տառային, հնչյունային, վանկային, բառային,որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել վերլուծական, համադրական և վերլուծական-համադրական:

Այսօր հայ իրականության մեջ գործում են գրաճանաչության ժամանակակից՝ վերլուծական-համադրական հնչյունավանկային և վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդները, որոնք կիրառվել և կիրառվում են նաև ռուսական մեթոդիկայում և հենվում են հայ և համաշխարհային դպրոցի գրաճանաչության կազմակերպման պրակտիկայով արդարացված այլ մեթոդների առանձին տարրերի վրա: Այս մեթոդները հայ դպրոցում գիտականորեն հիմնավորված ներդրեց պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանը, որի ստեղծած այբբենարանները լուրջ քայլ էին հայ այբբենարանագիտության մեջ: Վերլուծական-համադրական հնչյունավանկային մեթոդն ստեղծվել է՝ հիմք ընդունելով անցյալում գործածվող մի շարք մեթոդներից ընտրված և պատմականորեն արդարացված բազմաթիվ տարրեր:

Այս մեթոդով երեխաներին գրաճանաչ դարձնելիս կարևորվում է բառի հնչյունային վերլուծությունը. «Լեզվական վերլուծությունն իրականացվում է ամբողջից դեպի մասը և մասից դեպի ամբողջը տարվող հակադիր գործողություններով՝ պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն և հակադարձ շղթայով», և կարդալու նվազագույն միավոր դիտվում է վանկը[1]:

Այսինքն՝ երեխաները կարդալ են սովորում վանկերով: Սակայն այդ չի նշանակում, որ վանկերով կարդալն ուղեկցում է երեխային ամբողջ գրաճանաչության ընթացքում, երբ աշակերտների մեջ ձևավորվել են նոր տառը բառի մեջ ճանաչելու, մնացած տառերի հետ ձուլելու և կարդալու կարողությունները, երեխաները կարդում են բառերով, որոնք ունեն վանկային կորեր: Այդ եղանակով կարդալիս աշակերտները բառի մեջ տեսնում են դրանք, մտովի վերլուծում բառի վանկային կառույցը և սովորում են կարդալ՝ հիմք ընդունելով վանկը: Հետագայում՝ մեկ տասնյակ հնչյունտառերի յուրացումից հետո, երեխաները սկսում են բառերով կարդալ:

Հայ իրականության մեջ գործածված և գործածվող այբբենարաններն ուսումնասիրելիս (և ոչ միայն հայ) ակնառու է դառնում, որ որևէ մեթոդ առանձին հանդես չի գալիս: Կենտրոնանալով հնչյունաբանական լսողության զարգացման, վերլուծության և սինթեզի մտավոր գործողությունների ձևավորման վրա՝ այս մեթոդը նպատակաուղղված է երեխաներին պատրաստել կարդալու և գրելու հմտություններին տիրապետելուն և նպաստում մտածողության և խոսքի զարգացմանը: Ներկայումս այս մեթոդը ամենատարածվածն է (ընդգրկում է հանրակրթական դպրոցների 1-ին դասարանների 61%-ը): 1920-ական թվականներին ձայնային վերլուծական-սինթետիկ մեթոդը զանգվածային դպրոցում գրագիտության դասավանդման ամենատարածված մեթոդն էր: Սակայն երեխաներին գրել-կարդալ սովորեցնելու ամենադժվար պահը հնչյունից վանկի անցումն էր[2]: Կ. Դ. Ուշինսկին հետևյալ կերպ էր լուծում ընթերցանության ուսուցման խնդիրը: Նա ևս կարևորում էր վերլուծական-համադրական հնչյութավանկային մեթոդի կիրառումը: Առաջին հերթին նրա համար կարդալ սովորելը մայրենի լեզուն սովորելու մի մասն է, այդ թվում՝ 1) տեսողական ուսուցում 2) գրավոր նախապատրաստական վարժություններ. 3) ձայնային վարժություններ, որոնք պատրաստվում են ընթերցանությանը: Ուշինսկու մեթոդի համաձայն՝ երեխաները նախ ծանոթանում են ա, օ, ի հնչյունների հետ: Հնչյութավանկային

[1] Տեր-Գրիգորյան Ա. Ե. , Հայոց լեզվի մեթոդիկա, Եր. , 1980, էջ 62:
[2] Митина, Г. В., Методика обучения грамоте первоклассников, Хабаровск, 2023, с 13:

մեթոդը հնարավորություն է տալիս արագացնել ուսումնական աշխատանքի տեմպը, որը կարևոր նշանակություն ունի ինչպես ուսումնական ժամանակի արդյունավետ օգտագործման, այնպես էլ, կարդալու կարողության արագ ձևավորման տեսակետից: Հայերեն հնչյուն-տառերի խմբավորման և ուսուցման հաջորդականության որոշման համար հիմք են ընդունվել երեք կարևոր սկզբունքներ՝ ա) հնչյունի արտասանությունը, բ) տառերի գրությունը, գ) խոսքի մեջ դրանց գործածության հաճախականությունը: Գրաճանաչության առաջին փուլում ուսուցանվում են ա, ի, ու տառերը: Այստեղ պարզ է դառնում որ Գրիգորյանի և Ուշինսկու մեթոդները տառուսցման սկզբնական շրջանի վերաբերյալ նույն գաղափարներն են կրում: Ի տարբերություն գրաճանաչության ուսուցման վերլուծական-համադրական հնչյունային մեթոդի, որը հնչյունի անջատման համար միշտ վերլուծությունը սկսում էր խոսքից կամ նախապատրաստական զրույցից և անցնում նախադասությանն ու բառին, հնչյութավանկային մեթոդը թույատրում է հաճախ վերլուծությունը կատարել անմիջապես բառից, առանց նախորդ փուլերի պահպանման: Մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ նպաստում է աշխատանքի նպատակայնության բարձրացմանը, կրճատում է ժամանակի ծախսումը, վերլուծությունը դարձնում է անմիջական:

Բաղաձայնները որոնք առանձին արտասանելիս իրենց հնչյունային որակը կորցնում են, պետք է մատուցել վանկի մեջ՝ նախ ձայնավորի ուղեկցությամբ (բա, գա, դա. . .), որպեսզի ձայնավորի ազդեցությամբ նրա արտասանության ժամանակը երկարի և այն հասնի երեխաների լսողությանը, իսկ ապա ձայնավորին կից (աբ, ագ, ադ). որպեսզի այն, ճիշտ է կարճ, բայց մաքուր արտաբերվի և որպես ինքնուրույն հնչյուն հասնի երեխաների գիտակցությանը[3]: Բացահայտելով գրաճանաչության յուրաքանչյուր մեթոդի դրական և թերի կողմերը՝ հնարավորություն է ստեղծվել դրանց լավագույն կողմերը միավորել մեկ՝ գլոբալ մեթոդի մեջ: Այս մեթոդով երեխաներին գրաճանաչ դարձնելիս կարդալու միավոր է ընտրվում բառը՝ առանց բառապատկերի քայքայման[4]: Հայտնի է, որ մարդ կարդալով է կարդալ սովորում և գրելով գրել, ուստի այդ նպատակով այբբենական շրջանում լիարժեք բնագրեր են առաջադրվում կարդալու համար: Այդպիսի բնագրերը բացառում են 1-2 անգամ լսելով կամ կարդալով անգիր անելու հնարավորությունը. բնագրերի մեծությունն ու հագեցվածությունը ստիպում է երեխաներին ինքնութրույն ու հասկանալով կարդալ նյութը, ստիճանաբար վարժվել կարդալու մեջ:

---

[3] Տեր-Գրիգորյան Ա. Ե. , Հայոց լեզվի մեթոդիկա, Եր. , 1980, էջ 65:
[4] Գյուլամիրյան Ջ. , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր. , 2006, էջ 18:

Սկսած նախաայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, կարողություններ: Վերլուծական-համադրական հնչյութավանկային մեթոդի և այդ սկզբունքով կազմված Այբբենարանի ճիշտ ու արդյունավետ գործադրման բնագավառում զգալի հաջողություններ են ձեռք բերվել դպրոցում: Գրաճանաչության ուսուցման աշխատանքը գրեթե մասայական կերպով դրված է գիտական հիմքերի վրա[5]:

Գրաճանաչության ուսուցման գործընթացը բաժանվում է երկու շրջանի՝ նախապատրաստական և հիմնական: Գրաճանաչության դասավանդման ժամանակակից փոփոխական կրթական և մեթոդական համալիրներում նախապատրաստական շրջանն այլ ժամանակ է պահանջում՝ երկու շաբաթից մինչև մեկ ամիս: Նախապատրաստական շրջանը լուծում է ավանդական խնդիրներ՝ երեխաներին ծանոթացնել կրթական գործունեությանը, դպրոցի պահանջներին. ձայնային խոսքի վերլուծության արդյունքում հնչյունների յուրացում գրելու և կարդալու պատրաստում, սովորողների խոսքի զարգացում: Այս փուլում երեխաները տիրապետում են լեզվական այնպիսի տերմիններին և հասկացություններին, ինչպիսիք են խոսքը, նախադասությունը, բառը, վանկի շեշտը, ձայնավորը, բաղաձայնը, տառը, բաղաձայն ձայնի միաձուլումը ձայնավորի հետ: Ուսուցիչը հատուկ ուշադրություն է դարձնում յուրաքանչյուր աշակերտի մոտ խոսքի բանավոր ձևերի մակարդակի զարգացման սկզբնական մակարդակի բացահայտմանը, հատկապես լսելու և խոսելու համար:

Սովորողները ծանոթանում են «Այբբենարան» ուսումնական գրքին: Նրանք վերլուծվում են նախադասությունները, բառերը, վանկերը: Վերլուծական-համադրական վարժությունների արդյունքում զարգանում է երեխաների խոսքի լսողությունը: Հատկապես կարևոր է վերջին պահանջը. կարդալու սկզբում երեխաները պետք է պատրաստ լինեն վանկային և ձայնային վերլուծության և սինթեզի, նրանք պետք է պատկերացում կազմեն խոսքի ձայնային բնույթի մասին Այս մեթոդով երեխաներին գրաճանաչ դարձնելիս կարդալու միավոր է ընտրվում բառը՝ առանց բառապատկերի քայքայման: Անհրաժեշտության դեպքում բառի բաղադրիչները ներկայացվում են պայմանական նշանի՝ կորագծի միջոցով: Ըստ էության՝ գլոբալ մեթոդը մտնում է վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդների խմբի մեջ:

[5] Տեր-Գրիգորյան Ա. Ե. , Հայոց լեզվի մեթոդիկա, էջ 65:

Այս մեթոդը մասնավորապես կիրառվում է 6 տարեկանների գրաճանաչության ուսուցման գործընթացում, երբ կարդալու ուսուցման ժամանակ ընտրվում են միավանկ, սակավատառ բառեր:

Վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է, որ գրաճանաչության ուսուցման ժամանակ որպես կարդալու ամենափոքր միավոր առաջադրվում է բառը: Սակայն սա չի նշանակում, որ երեխաներին գրաճանաչ դարձնելիս չի կարելի բառը վանկատել. բազմավանկ բառերի կարդալու ուսուցման ժամանակ առաջարկվում է բառը բաժանել վանկերի՝ առանց խախտելու նրա ամբողջականությունը:

Այս խնդրի լուծման ժամանակ իբրև մեթոդական հնար օգտագործվում են վանկատման կորերը, որոնք տրվում են բառի տակ, կամ գծիկները, որոնք տրվում են վանկերի միջ»[6]: Այս մեթոդով կարդալ սովորեցնելիս աշակերտներին նախ առաջարկվում են միավանկ բառեր, որոնք նրանք պիտի կարդան միանգամից (դրանք դառնում են բառային կաղապարներ), այնուհետե այդ բառերը «աճեցվում» են նախ՝ սկզբից, ապա՝ վերջից, միավանկ բառին ավելանում են մեկ տառ կամ տառեր, վանկեր, կարդալու համար նաև առաջարկվում են փոփոխվող տառերով բառեր: Այս եղանակով կարող են ստեղծվել այսպիսի բառաշարքեր.

շուն	նուշ	տուն	մատ	ուս	սա
աշուն	անուշ	տունկ	արմատ	սուս	սար
	Անուշիկ	սունկ		Սուսիկ	Սարիկ

Գլոբալ մեթոդի կիրառման առանձնահատկությունները դրսևորվում են նաև տառի գրուսուցման գործընթացում, թեև երեխաները նախապես ծանոթանում են տառի մասնիկներին, նրանց համակցման ձևերին, սակայն տառը գրում են միանգամից: Գրաճանաչության գործընթացում երեխաները ծանոթանում են հայերենի հիմնական հնչյուններին, սովորում են դրանք լսել և առանձնացնել խոսքում, նշել դրանք տառերով, ըստ հաջորդականության վերլուծել բառի հնչյունները: Ուսումնասիրվող հնչյունի տառը ներկայացվում է միայն նրա՝ բառից անջատումից և այլ բառերի մեջ (բառասկզբում, բառավերջում, բառամիջում) նրա հնչեղությունն ուսումնասիրելուց հետո:

[6] Տեր-Գրիգորյան Ա.Ե. , Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը, «Լույս», Եր. , 1980, էջ 62:

Վերլուծական-համադրական հնչյունավանկային և վերլուծական համադրական հնչյունաբառային մեթոդը ժամանակակից արդյունավետ մեթոդներից են, որովհետև վերլուծական-համադրական վարժությունների կատարման ճանապարհով ապահովվում է երեխայի մտագործունեության զարգացումը, ուսուցումը հենվում է սովորողների ունեցած խոսքային կենսափորձի վրա: Գործընթացն առաջնորդվում է այն սկզբունքով, որ յուրաքանչյուր առողջ երեխա որոշակի ժամանակահատվածում կարող է առանց դժվարությունների ոչ միայն լիարժեք կերպով տառաճանաչ դառնալ, այլև սովորել կարդալ և գրել:

Գրաճանաչության ուսուցման առանձնահատկություններից է համարվում նաև տարբեր մեթոդների կիրառումը, այսպիսով Գրաճանաչության՝ օրինակելի կամ նորմալ բառերի մեթոդով գրել-կարդալ սովորեցնելու համար երեխաներին առաջարկում էին իրարից անկախ, ինքնուրույն, պարզ և հեշտ ընկալվող բառեր (ուշ, նուշ, մաս, սար), բացատրվում էր դրանց իմաստը, որը նպաստում էր այդ բառերի առանց դժվարության ընթերցելուն: Այնուհետև կատարվում էր հնչյունային վերլուծություն, ապա այդ բառը գրվում էր գգրատախտակին, աշակերտների ուշադրությունը հրավիրվում էր նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր տառի, ինչպես նաև մյուս տառերի նկատմամբ նրա ունեցած դիրքի վրա: Դրանից հետո յուրաքանչյուր տառը և ամբողջ բառը գրվում էր օդում, ապա՝ սեղանի վրա: Այս կարողությունների ձևավորումից հետո սովորած հնչյուններն ու տառերն օգտագործվում էին ծանոթ հնչյունների և տառերի կապակցության մեջ կամ դրանք ավելացվում էին, արդեն ծանոթ բառերի վրա՝ նոր բառեր ստանալու համար: Օրինակ՝ մատ-արմատ, ուկ-մուկ, ութ-թութ[7]:

Հ. Տեր-Միրաքյանը[8], ի տարբերություն իր նախորդների, առաջարկում էր նախ սովորեցնել կարդալ, ապա գրել, բաղաձայններն անցնել միայն ձայնավորների հետ՝ սովորած տառով կազմված բառը կարդալու համար հիմք ընդունելով այն, որ ձայնավոր հնչյունից կամ նրա տառից է գոյանում բառը: Օրինակ՝ ս-ա-ր ա, ար, սա, սար: Սակայն այս մեթոդն արդեն մերժված է մեր լեզվի համար, թեև նրա շատ տարրեր օգտագործվեցին հնչյունային մեթոդի մեջ: Օրգանական մեթոդի հիմնադիրը՝ Սեդրակ Մանդինյանը, հրաժարվեց իր առաջադրած հնչական մեթոդից և 1909 թ. վերակազմեց «Նոր այբբենարան օրգանական մեթոդով» դասագիրքը: Այս դասագրքում բաղաձայններն անկախ հնչյուններ չէին համարվում, իսկ կարդալու

[7] Գյուլամիրյան Ձ. , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր. , 2006, էջ 11:
[8] Տեր-Միրաքյան Հ., «Դասավանդության ուղեցույց, օրինակելի դասեր և նրանց տեսությունը», Թիֆլիս, 1908 թ.:

ժամանակ բառի մեջ հենակետեր էին դրվում: Առանձին և անկախ էին ուսուցանվում միայն ձայնավորները, իսկ բաղաձայններն ուսուցանվում էին ձայնավորների հետ, որպեսզի դրանք արտասանվեն մաքուր, անխառներ հնչյունը չխանգարի բաղաձայն հնչյունների ճիշտ ընկալմանը): Մանդինյանը կարևորում էր սկզբում նախադաս բաղաձայնը հնչեցնելը, հետո՝ վերջադաս բաղաձայնը՝ սա, աս:

Նա գտնում էր, որ երեխային գրել սովորեցնելը հարկավոր է սկսել միայն այն ժամանակ, երբ նրա մեջ ծագել է գրելու ցանկություն: Ս. Մանդինյանը նախադասության գծապատկերը ներկայացնում էր այսպես. Աշակերտը վաղ առավոտյան դպրոց գնաց: Մանդինյանը գրելու ուսուցման վարժություններն սկսում էր ամենապարզ գծից և աստիճանաբար բարդացնում: Տառերի ձևավորման համար նա ընդունում էր հիմնականում երկու տեսակի գծեր՝ բարակ, որը պայմանականորեն նշանակում էր 1-ով, և հաստ, որը նշանակում էր 2-ով: Արտասանվեն մաքուր, անխառներ հնչյունը չխանգարի բաղաձայն հնչյունների ճիշտ ընկալմանը): Մանդինյանը կարևորում էր սկզբում նախադաս բաղաձայնը հնչեցնելը, հետո՝ վերջադաս բաղաձայնը՝ սա, աս: Այսինքն ըստ Մանդինյանի ուսուցման վարժությունները պետք է սկզբնապես լինեն շատ պարզ, այնուհետև նոր բարդանան:

Գրելուց առաջ յուրաքանչյուր տառ կամ թիվ ուսումնասիրվում էր այդ տեսանկյունով և վերածվում թվային պլանի, որպեսզի աշակերտների համար պարզ դառնար, թե ինչ գծերից է բաղկացած այս կամ այն տառը: Կարդալու կարողության ձևավորման և հասկանալով կարդալու ունակության զարգացման գործում նա մեծ տեղ էր տալիս շարժական տառերին: Բաղաձայն տառն առանձին հնչեցնելուց խուսափելու համար Շանթն առաջարկում է գրելու ժամանակ տառերը միայն նկարել՝ առանց հնչելու, իսկ ապա հնչել ու գրել ամբողջ տառը միայն այն ժամանակ, երբ արդեն երեխան սովորած կլինի նոր տառի գրությունը և կարող է այն գրել ծանոթ տառերի կապակցության՝ բառի մեջ: Օրինակ՝ պ տառը սովորեցնելու համար շարժական տառերով կազմված պար օրինակելի բառի վերջին ծանոթ բաղաձայնը ծածկելով ու բացելով՝ ուսուցիչը երեխաներին կարդալ է տալիս պա, պար, պա, իսկ հետո ր տառը ծածկելով, իսկ պ տառը մե՛կ ծածկելով, մե՛կ բացելով՝ կարդալ է տալիս պա, ա, պա, ա, մինչև որ երեխաները սովորում են պ տառը կապակցության մեջ կարդալ, իսկ հետո՝ շատ ավելի ուշ, տպագիր կարդալ է առաջարկում: Օրգանական մեթոդը կարևոր նորություն չբերեց հայ դպրոց և, բնականաբար, զգալի հետք չթողեց գրուսուցման մեթոդիկայի պատմության մեջ:

ԳԼՈՒԽ 2-ՐԴ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Հետազոտական աշխատանքի նպատակն ներկայացնել գրաճանաչության ուսուցման առանձնահատկությունները: Հետազոտության ընթացքում մենք ձևակերպել ենք գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները:

- ուսուցանել հայերենի բոլոր հնչյուն-տառերը
- սովորեցնել ճիշտ համադրել հնչյուններն ու տառերը
- զարգացնել ընթերցանության նկատմամբ սեր և հոգատարություն
- ձևավորել ընթերցանական տարրական ունակություններ
- զարգացնել հայերեն խոսքն ու հայեցի մտածողությունը
- ձեռք բերել լեզվական նախնական գիտելիքներ
- իրականացնել ճանաչողական, դաստիարաիչական, զարգացնող աշխատանքներ

Յուրաքանչյուր դասապրոցեսից առաջ ուսուցիչը պետք է պատրաստի դասի պլան, դրան համապատասխան իրակնացնի դասապրոցեսը:

Ուսուցիչ _____ Ամսաթիվ _____

Առարկան – Մայրենի		
Դասարանը -I	Ուստարի -2023թ	Կիսամյակը - I
Թեման		
Դասի թեման	Գ հնչյուն – տառերի ուսուցումը	
Դասի նպատակը	Կսովորեն Գ հնչյուն – տառերը: Կմասնակցեն թեմատիկ նկարի շուրջ կազմակերպված	
Վերջնարդյունքները	Կկառուցեն բանավոր խոսք՝ նկարի բովանդակության շուրջ:	

	Կանջատեն նախադասություն պատմությունից: Կմեկնաբանեն նախադասությունը: Կսովորեն կարդալ բնագրիը: Կսովորեն գրել գ տառով բառեր, կազմել բառակապակցություններ, նախադասություններ:
Միջառարկայական կապերը	Կերպարվեստ, երաժշտություն, ֆիզկուլտուրա, պար
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Տպագիր և ձեռագիր գ տառի պատկերները, մեծադիր թեմատիկ նկարը, գարնան տեսարան պատկերող նկար, շարժական տառեր, Գառնիի տաճարի պատկերը:

Դասի ընթացքը

Խթանում՝ Աշակերտներին դիմել հանելուկով՝

Ես հագնում եմ կանաչ շորեր,

Գլխիս դնում ծաղկեպսակ,

Ծաղկով զուգում դաշտ ու ծորեր,

Բերում հավքեր հազար տեսակ:

Երեխաները կռահում են, թե տարվա ո՞ր եղանակն է :

«Գարուն» բառը ենթարկել հնչյունային վերլուծության՝

Իմաստավորման փուլ՝ երեխաները ստեղծեն պատմություն թեմատիկ նկարի շուրջը:

Ուսուցիչը ցույց է տալիս գ հնչյունի տառերը՝ գ Գ: Երեխաների ուշադրությունը հրավիրում է այն բանին, որ գ-ն նկարված է գոտու և գորգի տեսքով:

Գ տառի երկտողը.

Գոտին եմ քո շատ ամուր,

Քեզ հետ եմ ես ամենուր:

Կարդում են բառաշարքը և անցնում բառաձյուղերի ընթերցմանը:

Այստեղ վանկախաղը այնպես է կառուցված, որ **գ** հնչյունը ճիշտ և անխառն լսվի ա, է(ե), ի , օ(ո), ու ձայնավորներից առաջ և նրանց հետ միաձույլ ՝ մեկ վանկի մեջ: Այս բառաձյուղերը պետք է կարդան,_ինչպես տող առ տող, այնպես էլ սյուն ա ռսյուն: Բառակապակցությունները կարդալուց հետո դրանք օգտագործել նախադասությունների մեջ. ասենք՝ «Սպիտակ արագիլը եկել է տաք երկրներից:», «Գորշ ագռավը չի չվել տաք երկրներ:», «Ագահ գայլը վազում է գարնան գառնուկի հետևից:»

«Գոռն ու գարունը» ոտանավորը երեխաները պետք է անգիր սովորեն:

«Գարուն» բնագիրը կարդում է ուսուցչուհին բացատրում: Երեխաներից մի քանիսը կարդում են, մյուսները շարունակում:

<u>Ֆիզկուլտդադար</u> (10րոպե) «Եկե՞ք պարենք» Ձեռքերը դնենք գոտկատեղին: Հենվել ոտքերի թաթերին, հետո կրունկներին և մի ոտքով խփել հատակին: Շնչել համաչափ: Կատարել վարժությունը, փոխելով ոտքը նախ աջով խփել, հետո՝ ձախով:

<u>Կշռադատման փուլ</u>՝«Աջ ու ձախ», «Գտնել ավելորդը» խաղերով մրցույթների կազմակերպում, հանելուկի լուծում:

Շատ հետաքրքիր խաչբառ է տրված այս էջում: Սիրամարգի պոչի վրա կենդանիներեն , որոնց անունները պետք է լրացնել խաչբառում, որի ցանկում արդեն տրված է սիրամարգ բառը: Բոլոր կենդանիների անուններում կա գ հնչյուն – տառը, բացի մեկից: «Ո՞ր կենդանո ւանվան մեջ գ տառ չկա», նախքան լրացնելը հարցնում է ուսուցչուհին: Ով առաջինը պատասխանեց խրախուսվում է :

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար, սովորողներին տալիս ենք հետևյալ հանձնարարությունները: Այս թեմայի վերաբերյալ մենք նաև կարող ենք դասարանը բաժանել խմբերի և տալ յուրաքանչյուր խմբին մեկ հանձնարարությունը:

Այսպիսով դասարանը բաժանում ենք երեք խմբի և յուրքանչյուր խմբին տալիս մեկ առաջադրանք: Առաջադրանքը ներկայացված է ստորև:

1-ին խումբ- Նշի՛ր այն նկար-բառը, որի մեջ լսվում է Գ հնչյունը:

2-րդ խումբ Միացնելով վանկերը ստացի՛ր բառեր և գրի՛ր :

3-րդ խումբ տեղադրի՛ր Գ տառը բառազկզբում կամ բառավերջում և ստացի՛ր բառեր:



Այս առաջադրանքները հանձնարարելուց հետո ամփոփում ենք արդյուքները պարզելու համար սովորողները ինչպես են ընկալել թեման, ինչ բարդություններ կարող են առաջանալ թեման յուրացնելու ընթացքում:



Մենք ստացանք հետևյալ արդյունքը 1-ին խումբը 45 % ով կատարեց առաջադրնքը, 2-րդ խումբը 35 % ով կատարեց առաջադրանքը, իսկ 3-րդը խումբը ցույց տվեց 20% արդյունք: Այսպիսով մենք կարող ենք հանգել այն եզրակացության, որ նկարներով առաջադրանքները ավելի պարզ են աշակերտներին և նրանք ավելի շուտ են կարողանում ընկալել թեման քան, այն առաջադրանքները որոնք պահանջում են նոր բառեր կազմել: Այս փորձից ելնելով մենք շարունակում ենք կրկին աշխատանքը սովորողների հետ, լրացնելու համար բացը, և նոր առաջադրանքներ տալիս որպեսզի նրանք կարողանան, կազմել նոր բառեր և գրել: Կազմել նոր առաջադրանքներ ևս, այնտեղ զետեղել և նկարներ և նոր առաջադրանքներ, սովորողներ ուսուցման մակարդակը բարձրացնելու նպատակով: Փորձից ելնելով պարզ է դառնում նաև այն, որ մենք պետք է հաշվի առնենք դասարանի ընդհանուր մակարդակը, այնուհետև կազմենք առաջադրանքները: Մեր նպատակն է սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացումը, մենք պետք է յուրքանչյուր թեմայի ավարտին հասկանանք թե որքանով է այն յուրացված, հետո միայն անցնել հաջորդ թեմայի ուսումնասիրմանը: Դրա արդյունքնում կունենանք կիրթ, գրաճանաչ և զարգացած աշակերտ:

Հետազոտության ընթացքում կատարել ենք հարցում ուսուցիչների շրջանակում, պարզելու համար գրաճանաչության մեթոդները որն է ավելի արդյունավետ որպեսզի կիրառվի: Ուսուցիչների 35 %-ը կողմ է վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդին, 40 %-ը վերլուծական-համադրական հնչյունավանկային, իսկ 25 %-ը մաքուր բնական հնչյունների մեթոդին:



Ամփոփելով արդյունքները կարող ենք հանգել այն եզրակացության, որ ընդունելի են գրաճանաչության բոլոր մեթոդները, ինչ մեթոդ էլ կիրառի ուսուցիչը նչա նպատակը միայն մեկն է աշակերտին գրաճանաչ դարձնելը: Հաշվի առնելով դասարանի սովորողների ընդունակությունների մակարդակը, ուսուցիչը ինքը կարող է ընտրել հարմար մեթոդը: Ներկայիս «Այբբենարանը» կառուցված է հնչյութավանկային (բառային) վերլուծական համադրական մեթոդով, հնարավորություն է ընձեռում դասը վարելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ: Բոլոր դասերն այնպես են կառուցված, որ զարգանան երեխաներ կարդալու, գրելու, խոսք առուցելու ունակությունները[9]: Սակայն ուսուցիչը կարող է կիրառել գրաճանչության այլ մեթոդ ևս, որով կհասնի ավելի լավ արդյունքի:

[9] Սարգսյան Վ. , Այբբենարան-Ուսուցչի ձեռնարկ, Եր. , 2012, էջ 15:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Գրաճանաչության հիմնական նպատակը երեխային կարդալ սովորեցնելն է, որի համար անհրաժեշտ է տեսողական զգայարանն աշխատեցնել լսողական և խոսքաարտաբերական զգայարանների հետ: Ըստ գրաճանաչության մեթոդիկայի կարդալն ու գրելը պետք է միասին ուսուցանվեն, քանի որ կարդալը նպաստում է գրելու կարողության ձևավորմանը, իսկ գրելը՝ կարդալու: Գրաճանաչության դասի գլխավոր նպատակը երեխային կարդալ սովորեցնելն է, որի համար անհրաժեշտ է տեսողական զգայարանն աշխատեցնել լսողական և խոսքաարտաբերական զգայարանների հետհամատեղ:

2. Այսօր հայ իրականության մեջ գործում են գրաճանաչության ժամանակակից՝ վերլուծական-համադրական հնչյունավանկային և վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդները, որոնք կիրառվել և կիրառվում են նաև ռուսական մեթոդիկայում և հենվում են հայ և համաշխարհային դպրոցի գրաճանաչության կազմակերպման պրակտիկայով արդարացված այլ մեթոդների առանձին տարրերի վրա:

3. Այսօր անընդունելի է միայն պատմականորեն փորձարկված, արդարացված ավանդական մեթոդների մի մասի կամ նրանցից ընտրված առանձին հնարների գործածումը այբբենարաններում և դասագործընթացում՝ առանց հաշվի առնելու ժամանակակից կրթության առջև դրված նոր պահանջները, աշակերտակենտրոն, անհատակողմնորոշված մոտեցումների, փոխգործուն և ակտիվ մեթոդների համադրման անհրաժեշտությունը: Հաշվի առնելով գրաճանաչ դարձող սերունդների միջև առկա բազմաբնույթ և տարբեր հիմնավորում ունեցող տարբերություններն ու առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է փոխել, առավել ճկուն դարձնել գրաճանաչության դասի կառուցվածքը՝ այն բխեցնելով 6 տարեկան երեխաների տարիքային, հոգեբանական, կազմաբնախոսական առանձնահատկություններից, հաշվի առնելով նաև սովորողների բազմաբնույթ մտածողության ընձեռած ընդարձակ ու բազմաշերտ հնարավորությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր. , 2006:
2. Սարգսյան Վ. , Այբբենարան-Ուսուցչի ձեռնարկ, Եր. , 2012
3. Տեր-Գրիգորյան Ա. Ե. , Հայոց լեզվի մեթոդիկա, Եր. , 1980:
4. Տեր-Գրիգորյան Ա.Ե. , Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը, «Լույս», Եր. , 1980:
5. Տեր-Միրաքյան Հ., «Դասավանդության ուղեցույց, օրինակելի դասեր և նրանց տեսությունը», Թիֆլիս, 1908 թ.:
6. Митина, Г. В., Методика обучения грамоте первоклассников, Хабаровск, 2023: